

ները շատ խզմալի, հին շէնքեր էին, որ այժմ քանդել են և նորն են կառուցանում:

Թարգափակն շնչը կղզու բոլոր շէնքերից գեղեցիկ է, միայն ափսես, որ գետնից մի փոքր ինչ բարձր չէ շինուած, խոնաւութիւնից փոքր ինչ աւելի ազատ լինելու Մի երկար նրբանցքի մէջ բացում են չորս մեծ, լուսաւոր սենեակներ, որոնցից մինը ծառայում է իրը վանքի զբաղարան-թանգարան:

Իրեն մասն, խոհանոց, փայտաւում ծառայում են հին սեղանատան և հին խցերի փոքր ինչ վերանորոգուած շէնքերը:

ՎԱՆՔԻ ԱՐԲՈՒԹԻՒՆՆԵՐԸ, ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԶԱՐԴԵՐՆ ՈՒ ԱՆՕԹՆԵՐԸ

Վանքի ամենանշանաւոր սրբութիւնը տուրբ նշան կոչուած խաչն է: Սա երկաթէ մի մեծ խաչ է, կենդրունում, ապակու տակ ամփոփուած խաչափայտի մասից:

Աւանդութեան ասելով այս խաչը շինուած է այն կոնքի կտորից, որի մէջ Աւատուածածինը լողացրել է Մանուկ Յիսուսին: Թաղէսս առաքիալը այդ կոնքից տառանց գործիքից երեք խաչ է պատրաստել, որոնցից մինը սա է, երկրորդը գտնւում է Նախիջևանի գաւառի Երնջակայ ո. Կարապետի վանքում և կոչւում է Հազարափրկիչ, խեկ երրորդը՝ Անքանի նահանգի Գրիգորոպոլ քաղաքում, ուր տարել են Անիից զաղթող ժողովուրդը:

Սևանայ վանքի այս սուրբ նշանը կոչւում է նաև կոթայ սուրբ նշան, մի առմամանակ Գեղարքունիքի Կոթայ վանքում պահուած լինելու պատճառով: Այս խաչը միասմամանակ էլ պահուել է Հայոց Յովհաննու կամ Մարդարաւանեաց վանքում, ուր նրա գործած հրաշքի նկարագրութիւնը կը պատմենք նոյն վանքի ստորագրութեան մէջ: Ոչ միայն բազմաթիւ ուխտաւորներ են գալիս Սևան սուրբ նշանը համբուրելու, այլ և զրեթէ ամէն տարի հասարակական մի գժեախտութեան, համաճարակների, հարաշտութեան, կարկանդակ և այլ ժամանակ ժողովուրդը զալիս տառնում է ո. Նշանը՝ գիւղերում անդաստան կատարելու:

Բացի այս հռչակուած տուրբ-նշանից՝ Սևանում կան նաև հետեւեալ խաչեր.

Արծաթէ, ոսկեզօծ մի խաչ, որի մէջ կայ կենաց փայտից մի մասն. սրբ մասին մի աւանդութիւն ասում է թէ Աշոտ թագաւորի Մաշտոց վարզապետին տուածն է, մի ուրիշ աւանդութիւն Սիւնեաց Բիւրեղ տիկնոջ Հերակլ Յունաց կայսրից ստացած խաչափայտի մի մասն է համարում: Նոյն խաչափայտի մի

ուրիշ մասը գտնուում է Տաթևում, «Աւագ սուրբ Նշան» առնուամբ, մի մասն էլ Վայոց Չորում «Արկադու սուրբ խաչ» առնուամբ:

Մի արծաթէ մեծ խաչ, որ յիշատակ է Զիթախնանց եղբայրների, 1656 թուին նուրիբուած:

Թառասուն և հինգ արծաթէ խաչեր, որոնցից վեցի մէջ ամփոփուած են հետեւել սրբերից մինի մասունքը՝ Պօղոս առաքեալի, Գէորգ Զօրավարի, Մինաս Զինաւորի, Յակոբ առաքեալի, ո. Կարապետի, Յակոբ Մժբնայ Հայրապետի:

Թշեայ մի խաչ ևս կայ, որի մէջ ամփոփուած է Վարդան գօրավարի առամբ:

Երկու հատ էլ փայտէ խաչեր կան, նուրբ քանդակներով և եղերքը արծաթով պատած:

Ուշագրաւ են նաև չորս հատ արծաթէ ոսկեզօծ մասնատիեր, տասն հատ նոյնպիսի սկիհներ, 3 հատ արծաթէ բուրվառներ, 2 հատ արծաթէ խնկատուփ, մի հատ արծաթէ մեռոնառուփ, մի դոյզ արծաթէ քշոցք, մի հատ արծաթէ ոսկեզօծ խաչվառք:

Թաւականաշափ եկեղեցական զգեստների մէջ աչքի են ընկնում Դաւիթ կաթուղիկոսի եպիսկոպոսական թագը և եմիթորոնը, չորս հատ արծաթապատ սաղաւարանները, եպիսկոպոսական փղոսկրեայ գաւազանը և այլն:

ՎԱՆԻՔԻ ԶԵՌԱԳԻՄՆԵՐԸ

Դուկասեանի շինած դպրոցական շէնքի սենեակներից մինը դարձրած է գրադարան և այստեղ բաւական խնամքով պահեւում են մօտ ութ հարիւր կտոր տպագրուած և 112 ձեռագիրներ՝ մեծ մասամբ կրօնական բովանդակութեամբ:

Զեռագիրների ցուցակը նախ կազմել է Եղիա արեղայ Զալալեանը՝ 1870 թուին, ապա Սահակ վարդապետ Ամատունին 1892 թուին: Այս երկու ցուցակներն էլ շատ համառոտ են և, նոյն իսկ քաղուածքներ յիշատակարաններից չունեն: Ամատունու կազմածը տպուած է Մեսրովը արք-եպիսկոպոս Մմբատեանի «Տեղապիր Գեղարքունի գաւառի» մէջ (հր. 395—412): Մրանից անհամեմատ մանրամասն և յիշատակարանների քաղուածքներով, թէպէտե դարձեալ ոչ լիակատար, կազմել է պրօֆ. Ն. Մառը 1890 թ. որ և տպուել է 1892 թ. ուսերէն՝ Մուսկվայում և հայերէն թարգմանութեամբ՝ Վիեննայի Միթթարեանների մօտ:

Վերջերս Թոփչեանը ևս կրկին կատարել է այդ աշխատանքը, սակայն դեռ ևս չի հրատարակել: